

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. ապրիլի 12-ի  
նիստի /արձանագրություն N 14/

1. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսկան կազմին և աշխատակիցներին հավատարմագրման գործընթացին նախապատրաստելու նպատակով հաստատել հանդիպումների ներքոհիշյալ ժամանակացույցը՝

	մասնակիցներ	օրը, ժամը	պատասխանատու
1	Խորեոգրաֆիայի ամբիոն	18.04.2016 ժ. 11 <sup>00</sup>	Վ. Ավանեսյան
2	Բեմ. շարժման և մեներգի ամբիոն		
3	Դեր. վարպետ. և ռեժ. ամբիոն		
4	Կերպարվեստի և անիմաց. ամբիոն	19.04.2016 ժ. 11 <sup>00</sup>	Ա. Երզինկյան
5	Կինոյի և հեռուստատես. ամբիոն		
6	Արվեստի պատմ. և տեսութ. ամբիոն	20.04.2016 ժ. 11 <sup>00</sup>	Ն. Սարգսյան
7	Արվեստի կառավարման և մշակութ. քաղաքականության ամբիոն		
8	Հումանիտար գիտութ. ամբիոն		
9	Ֆակուլտետներ , ստորաբաժանումներ, դեկաններ	25.04.2016 ժ. 11 <sup>00</sup>	Ն. Սարգսյան Վ. Ավանեսյան
10	Ուսխորհուրդ, ուսանողներ		Ա. Երզինկյան

1.2 Ինստիտուտի բուկլետում ներառած նյութը, որպես բուհի մասին ամփոփ տեղեկատվություն, հայերեն և անգլերեն լեզուներով տեղադրել կայքում,

1.3 հավատարմագրման հանձնաժողովին ներկայացնելու համար պատրաստել տեղեկանք վերջին 5 տարում մեր ուսանողների և դասախոսների կողմից արվեստի և գիտության բնագավառում ձեռք բերած հաջողությունների վերաբերյալ,

1.3.1 սույն տեղեկանքի անգլերեն տարբերակի կազմումը հանձնարարել ռեկտորի օգնական Պ. Մարյանին:

1.4 Հարց բարձրացնել առաջիկա գիտական խորհրդում ԳԽ-ին կից ստեղծելու որակի ապահովման համաինստիտուտային հանձնաժողով:

2. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար,
  - 2.1 հանձնարարել Կինոյի և հեռուստատեսության ամբիոնին կազմել կուրսային աշխատանքների նկարահանման համար տեխնիկայի տրամադրման ժամանակացույց:
3. Լեհաստանի Ա. Միցկևիչի անվան ինստիտուտի հետ համագործակցության ընթացքը համարել բավարար:
4. Ինստիտուտի գնումների գործընթացի կազմակերպման աշխատանքները համարել անբավարար և հարցը քննարկել ռեկտորատի հաջորդ նիստում:
5. Նամակով դիմել ՀՀ ԱԻ նախարարությանը և խնդրել ինստիտուտում կազմակերպելու քաղաքաշտպանության դասընթացներ:
6. Ծննդյան 65-ամյակի կապակցությամբ Բեմական շարժման և մեներգի ամբիոնի վարիչ Արմեն Վասիլի Մելիքսեյանին պարգևատրել ԵԹԿՊԻ պատվո մեդալով:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան